ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հաստատված է ամբիոնի նիստում**

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Ֆ.Վ.Մովսիսյան /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № 2

«13» սեպտեմբերի, 2023 թ.

# Պ/բ-026 -ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դասիչ, դասընթացի անվանում

## ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

**Մասնագիտություն՝** 022201.00.6 – Պատմություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** 022201.01.6 – Պատմություն
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** **բակալավր**
/բակալավր, մագիստրատուրա/

**Ամբիոն՝** **Պատմության**
/ամբիոնի լրիվ անվանումը/

**Ուսուցման ձևը՝** **առկա, հեռակա**
/առկա, հեռակա/

**Կուրս/կիսամյակ** առկա **4-րդ կուրս, 1-ին կիսամյակ**
հեռակա **5-րդ կուրս, 2-րդ կիսամյակ**

**Դասախոս(ներ)՝** Ֆելիքս Մովսիսյան
/անուն, ազգանուն/

Էլ. հասցե/ներ felmov@mail.ru

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում 3
2. Դասընթացի նպատակը և խնդիրները 3
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները 4
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
    - 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
    - 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
    - 12.3 Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
    - 14.1 Ուսանողների գիտելիքների ստուգում
    - 14.2 Հարցաշար
    - 14.3 Գնահատման չափանիշներ
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

**1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].**

**«Նոր պատմության պատմագրություն»** դասընթացը կարևորվում է պատմության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է «**022201.01.6 – Պատմություն»** կրթական ծրագրի ուսումնական պլանի «Ընդհանուր մասնագիտական» կրթամասում:

**2. Դասընթացի նպատակը և խնդիրները.**

**2.1.** Դասընթացի նպատակը.

Պատմագրության տիրապետումը հնարավորություն է տալիս ուսանողներին առավել ամբողջական ընկալել պատմական գործընթացները և խորապես ուսումնասիրել պատմական գիտության պատմությունը: «Նոր պատմության պատմագրություն» առարկայի դասավանդումը նպատակ է հետապնդում ուսանողությանը ներկայացնել պատմական մտքի զարգացումը Եվրոպայի և Ամերիկայի երկրներում XV-XIX դարերում:

2.2 Դասընթացի խնդիրներն են.

1. Ուսանողներին համակողմանիորեն ներկայացնել և մեկնաբանել.
   - Վերածննդի դարաշրջանի (XV-XVIդդ) արևմտաեվրոպական հումանիստական պատմագրությունը:
   - XVIIIդ. ֆրանսիական լուսավորության ժամանակաշրջանի պատմագիտական հայացքները, բնական վիճակի տեսությունը պատմությունում անընդհատ առաջընթացի գաղափարը, հասարակության զարգացման վրա բնական-աշխարհագրական միջավայրի ազդեցության մասին տեսությունը :
   - անգլիական և շոտլանդական լուսավորիչների հայացքները
   - Գերմանիայում իրավունքի պատմական դպրոցը
   - Ֆրանսիայում վերահաստատման դարաշրջանի լիբերալ պատմական դպրոցը
   - Անգլիական լիբերալ և պահպանողական պատմագրությունը
2. Խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական գիտելիքները:
3. Ուսանողներին սովորեցնել գիտելիքներն ու ունակությունները կիրառել պրակտիկ գործունեության մեջ:
4. Նախապատրաստել հետագա մասնագիտական գործունեության:

**3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները .**

**«Նոր պատմության պատմագրություն»** դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների մոտ Եվրոպայի և Ամերիկայի երկրների պատմության իմացություն, փաստերը համադրելու և վերլուծելու կարողություններ

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

**4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2] և կոմպետենցիաները.**

**«Նոր պատմության պատմագրություն»** դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. Ամերիկայի պատմության առավել կարևորագույն իրադարձությունների, ուսումնասիրվող ժամանակաշրջանում ամերիկյան մայրցամաքում առկա պատմական հիմնախնդիրների և դրանց վերաբերյալ ժամանակակից պատմագրության գնահատականների, Ամերիկայի երկրների զարգացման առանձնահատկությունների իմացություն
2. Ամերիկյան մայրցամաքում տեղի ունեցող իրադարձությունները հասկանալու, համաշխարհային քաղաքակրթության վրա դրանց ունեցած ազդեցությունները վերլուծելու, Ամերիկյան մայրցամաքում տեղի ունեցող պատմական գործընթացներն ու իրադարձությունները համեմատելու և դրանց պատճառահետևանքային կապերը բացահայտելու կարողություն:
3. գիտելիքների կիրառում՝ համաշխարհային նորագույն քաղաքական զարգացումները հասկանալու համար

**Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.**

<u>**Ա)Ընդհանրական կոմպետենցիաներ**</u>

- վերլուծության և համադրության կարողություն *(ԳԿ -1 )*,
- հենքային ընդհանուր գիտելիքների տիրապետում *(ԳԿ - 3 )*,

պետական լեզվով հաղորդակցվելու կարողություն *(ԳԿ - 4 )*,

- քննադատության և ինքնաքննադատության կարողություն *(ՄԶԿ - 1)*,
- միջանձնային գործնական հմտություններ *(ՄԶԿ - 2),*
- միջմշակութային տարբերությունները և բազմազանությունները ընկալելու կարողություն *(ՄԶԿ - 4)*,-
- գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն *(ՀԳԿ -1),*
- ուսումնառության կարողություն *(ՀԳԿ -3)*

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ՄԿ)

1. կարողանա կատարել պատմության վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքների համակարգում և տեսական վերլուծություն **(ՄԿ-2)**
2. կարողանա համադրելու պատմական փաստերը և համակողմանի գնահատել երևույթները **(ՄԿ-3)**
3. ունենա սկզբնաղբյուրների հետ աշխատելու հմտություններ **(ՄԿ-5)**
4. կարողանա պատմական կոնկրետ փաստերն ու երևույթները բացահայտել ընդհանուր տեսությունների, գաղափարների տեսանկյունից **(ՄԿ-7)**
5. ունենա պատմագիտական հետազոտություններ կատարելու ունակություններ **(ՄԿ-10)**

## *5.* Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[3].

**«Նոր պատմության պատմագրություն»** դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել պատմության բնագավառում մասնագիտական գործունեության ընթացքում, ուսումնական հաստատություններում աշխատելու, կրթությունը հաջորդ փուլերում շարունակելու և պատմագիտության բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

## *6.* Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

| Չափանիշ | Առկա ուսուցման համակարգ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարություն (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | 4 կրեդիտ/120 ժամ | 4 կրեդիտ/120 ժամ |

| Աշխատանքի տեսակը | ժամաքանակ | ժամաքանակ |
|---|---|---|
| Դասախոսություն | 42 | 8 |
| Գործնական աշխատանք | | |
| Սեմինար պարապմունք | 14 | 4 |
| Լաբորատոր աշխատանք | | |
| Ինքնուրույն աշխատանք | 64 | 108 |
| **Ընդամենը** | 120 | 120 |
| Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն) | ընթացիկ քննություն | ընթացիկ քննություն |

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

7. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u>[4] .

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Սեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Սեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:
  Սեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ևլույթի բովանդակությանհարցադրումների և պատասխանների մասին:

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:
  Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝
  - **<u>Ռեֆերատ</u>** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
  - **<u>Կլոր սեղան</u>** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
  - **<u>Կոնկրետ իրավիճակների վերլուծություն</u>** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
  - **<u>Նախագծերի մեթոդ</u>** – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:

---

[4] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

[5] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

- **<u>Ջեկույց</u>** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝**[6] դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական և խմբային, ուսուցում գործողությամբ, իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր, խաղայնացում

9. **Ուսումնառության մեթոդներն են**[7]՝ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, համեմատման և համակարգման սխեմաների կազմում, հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում

[6] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:
[7] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

## 10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[8].

| հ/հ | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | սեմինար պարապմունք | գործնական աշխատանք | լաբորատոր աշխատանք | ինքնուրույն աշխատանք |
| 1. | Հումանիստական պատմական միտքը: | 4 | 2 | | | 6 |
| 2. | Լուսավորության դարը Ֆրանսիայում. լուսավորիչների պատմական հայացքները: Պատմական մտքի զարգացումը Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակաշրջանում: | 4 | 4 | | | 6 |
| 3. | Անգլիական լուսավորությունը և պատմական միտքը: Շոտլանդական դպրոցը: | 4 | 2 | | | 4 |
| 4. | Պատմության փիլիսոփայությունը գերմանական լուսավորությունում: | 4 | | | | 4 |
| 5. | Անկախության համար պատերազմը և հյուսիսամերիկյան լուսավորիչների սոցիալ-պատմական հայեցակետը: | 4 | 2 | | | 6 |
| 6. | Ֆրանսիական պատմագրությունը: Վերահաստատման ժամանակաշրջանի պատմաբանների դպրոցը:<br><br>1789թ. Ֆրանսիական մեծ հեղափոխության հիմնախնդիրները: | 2 | 2 | | | 6 |
| 7. | Գերմանական պատմագրությունը. լուսավորությունից դեպի ռոմանտիզմ: | 4 | | | | 6 |
| 8. | Տորիների և վիգերի պատմագրությունը Անգլիայում: Ռոմանտիկական գաղափարների ազդեցությունը: | 4 | | | | 6 |

[8] Նման է օրացուցային պլանին

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 9. | Պատմական գիտության կայացումը ԱՄՆ-ում: «Վաղ դպրոցը»: | 4 | | | | 6 |
| 10. | Պոզիտիվիստական պատմագրությունը Անգլիայում և Ֆրանսիայում: | 2 | | | | 6 |
| 11. | Գերմանական պատմագրությունը: Փոքր գերմանական պատմական դպրոցը: | 4 | | | | 4 |
| 12. | ԱՄՆ պատմագրությունը քաղաքացիական պատերազմի և վերակառուցման ժամանակաշրջանում: Պոզիտիվիզմի հաստատումը XIX դարի վերջին: | 2 | 2 | | | 4 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 42 | 14 | | | 64 |

## 11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|
| **Պարտադիր գրականություն (ՊԳ)** | | |
| 1. | Историография истории нового и новейшего времени стран Европы и Америки. Под ред. И.П.Дементьева | Москва, 1990 |
| 2 | Историография истории нового времени. Под ред. В.И.Овсянникова и В.Г.Сироткина | Москва, 1989 |
| 3 | Историография новой и новейшей истории стран Европы и Америки. Под ред. А.В.Адо, И.С.Галкина и др.. | Москва, 1977 |
| 4 | Историография новой и новейшей истории стран Европы и Америки. Под ред. И.С.Галкина, И.П.Дементьева и др. | Москва, 1968 |
| 5 | Историография нового времени стран Европы и Америки. Под ред. И.С.Галкина и др.. | Москва, 1967 |
| 6 | Историография южных и западных славян, | М., 1987 |
| 7 | Историография ñредних веков, под. ред. Ерусалимского | |
| 8 | Гутнова Е.В. Историография истории средных веков, | М., 1985 |

| | | |
|---|---|---|
| 9 | Историография истории средных веков . Под ред. И.С. Галкина, | М., 1965 |
| | | |

## 12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

### 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Գրականություն[9] |
|---|---|---|---|---|
| 1. | Հումանիստական պատմական միտքը: | Հումանիստ.աշխարհայացքըՀումանիստ. պատմագրությունը: Հումանիզմը Իտալիայում | 4 | տե՛ս գրականության ցանկը 1,3,4 |
| 2. | Սոցիալ-քաղաքական միտքը և պատմությունը XVII դ. անգլ. հեղափոխության ժամանակաշրջանում: Իշխանության և սեփականության ծագման հիմնախնդիրը: | Անգլիական հասարական միտքը հեղափոխութ. դարաշրջանում: Դիգգերի սոցիալ-պատմ հայացքները: Լեվելերների սոցիալ-պատմական հայացքները: Ինդեփենդենտների քաղաքական-պատմական հայեցակարգը Միապետականների հասարակակ.-քաղաքական հայացքները: Պատմական միտքը վերահաստատման տարիներին: | 4 | տե՛ս գրականության ցանկը1,2,3 |
| | Լուսավորության դարը Ֆրանսիայում. Լուսավորիչների պատմական հայացքները: Պատմական մտքի զարգացումը Ֆրանսիական մեծ հեղափոխ-ան ժամանակա շրջանում: | Ֆր. լուսավորիչներն ու պատմ-ը: Ռոմանա-գերմ. հիմնախնդրի ձևավորումը: Ժ.Բ.Դյուբո: Շ.Լ.Մոնտեսքյո: Ֆ.Վոլտեր: Ժ.Թյուրգո: Ֆրանս. փիլիսոփա-մատերիալիստները:Դիդրո: Կ.Հելվեցիուս: Պոլ Հոլբախ: Գիյոմ Ռեյնալ: Ժ.Ժ.Ռուսսո: Գ.Մաբլի: Պատմ. մտքի զարգ. ֆրանս. հեղ.տարիներին: | 4 | տե՛ս գրականության ցանկը 4, 5 |

[9] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Ժ.Ա.Կոնդորսե: Ա.Բարնավ: Կ.Վոլնեյ:<br>Ֆ.Բաբյոֆը, բաբյոֆականներ | | |
| | Անգլիական լուսավորությունը և պատմական միտքը: Շոտլանդական դպրոցը: | Անգլիական լուսավորության հիմնական գծերը: Շոտլանդական պատմական-փիլիսոփայական դպրոցը: | 4 | տե՛ս գրականության ցանկը, 1, 2, 4, 5 |
| | Պատմության փիլիսոփայությունը գերմանական լուսավորությունում: | Պատմական գիտության զարգացումը:<br>Պատմական-փիլիսոփ. միտքը գերմանական լուսավորությունում: Ռոմանտիզմի ծագումը:<br>Գյոթինգենյան դպրոցը:<br>Գերմանական յակոբինականությունը: | 4 | տե՛ս գրականության ցանկը 2, 3, 4, 5 |
| | Անկախության համար պատերազմը և հյուսիսամերիկյան լուսավորիչների սոցիալ-պատմական հայեցակետը: | Ամերիկյան պատմագրութ. ակունքները: Ամերիկյան լուսավորության հիմնական գծերը:<br>Ամերիկյան հեղափոխության չափավոր գործիչների պատմական հայացքները: | 4 | տե՛ս գրականության ցանկը, 3,4 |
| | Ֆրանսիական պատմագրությունը:<br>Վերահաստատման ժամանակաշրջպատմաբանների դպրոցը:<br>1789թ. Ֆրանս. մեծ հեղափոխության հիմնախնդիրները: | Պատմ. գիտ վերահաստատմ. ժամ-շրջանում: Ռոմանտիկական պատմագր ծագումը: Ֆրանս. հեղափ. պահպանողականների գնահատ: Վերահաստ. շրջ. պատմաբանների լիբերալ դպրոցը:<br>Ուտոպիական-քննադատական սոցիալիզմի պատմ. գաղափ.: 1830-1840-ակ.թթ պատմագրութ-ը:<br>Ռոմանտիկական պատմագրութ. դեմոկրատ. ուղղությունը:<br>Յակոբ.ավանդ.ի ծագումը ֆրանս. հեղափոխության պատմագրությունում: 1830-1840-ական թ.թ. կոմունիստների պատմական հայացքները: | 4 | տե՛ս գրականության ցանկը 1, 2, 5 |
| | Գերմանական պատմագրությունը. լուսավորությունից դեպի ռոմանտիզմ: | Պատմական գիտ. վիճակը: Պատմական ընկերությունների գործունեութ-ը: Գերմանական փիլիսոփաների պատմական | 4 | տե՛ս գրականության ցանկը, 2, 4, 5 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | տեսությունները։<br>Գերմանական ռոմանտիզմը։<br>Իրավունքի պատմ. դպրոցը։<br>Լիբերալ-ռոմանտիկակն պատմագրութ.ը։<br>Հայդելբերգի լիբերալ-լուսավորական դպրոցը։ | | |
| | Տորիների և վիգերի պատմագրությունը Անգլիայում։ Ռոմանտիկական գաղափարների ազդեցությունը | Անգլիական հասարակական միտքը։ Պատմական գիտության վիճակը։<br>Տորիների պատմագրությունը։ Վիգերի պատմագրությունը։Մանրբուրժուական արմատական պատմագրությունը։ | 4 | տե՛ս գրականության ցանկը 1-5 |
| | Պատմական գիտության կայացումը ԱՄՆ-ում։ «Վաղ դպրոցը»։ | Անկախության համար պատերազմի պատմագրությունը։ «Վաղ դպրոցի» պատմաբանները։ Ստրկության մասին գաղափարական պայքարը և պատմագրությունը։ | 2 | տե՛ս գրականության ցանկը 1, 2, 4 |
| | Անգլիական պոզիտիվիզմը։ Պատմագրության հիմնական ուղղությունները։ | Հասարակական միտքը։<br>Օքսֆորդի և Քեմբրիջի պատմական դպրոցները։<br>Անգլ.հեղափոխ պատմությունը։ Գաղութային քաղաքական. պատմությունը։<br>Սոցիալական հիմնախնդիրներն ու բանվոր. շարժմ. պատմ.։ | 4 | տե՛ս գրականության ցանկը 1, 3, 4, |
| | Պատմական գիտությունը Ֆրանսիայում։ Պոզիտիվիստական պատմագրությունը։ | 1850-60-ակ թթ պատմագրութ.։Պոզիտիվիզմի սկզբնավորումը։<br>Դեմոկրատ. և սոցիալիստակպատմագրութ.։Պոզիտիվիստ. պատմագրությունը 1870-1890-ական թթ։<br>Բուրժուական-հանրապետակ պատմագրութ.։Մարքսիստակ.պատմագրության ծագումը։ | 2 | տե՛ս գրականության ցանկը 2,3, 5 |
| | Գերմանական պատմագրությունը։ Փոքր գերմանական պատմական | Պատմական գիտության զարգացումը։ Փոքրգերմանական պատմական դպրոցը։ | 2 | տե՛ս գրականության ցանկը 1, 2, 3, 4, 5 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | դպրոցը: | Մեծգերմանական ուղղությունը:<br>Լիբերալ ուղղությունը:<br>Պատմական տնտեսական ուղղությունը:<br>Սոցիալ-դեմոկր. ուղղությունը: | | |
| | ԱՄՆ պատմագրությունը քաղաքացիական պատերազմի և վերակառուցման ժամանակաշրջանում: Պոզիտիվիզմի հաստատումը XIX դարի վերջին: | Քաղաքացիակ. պատերազմի պատմագրութ.-ը:<br>Ստրկատիրական ճամբարի պատմաբաններըԼիբերալ ուղղությունը:<br>Արմատական-աբոլիցիոնիստ. հրապարակախոսությունը:<br>Հասարակ. մտքի զարգացումը XIX դարի վերջին:<br>Ռոմանտիկական դպրոցի մայրամուտը: Ջեյմս Սքուլեր:<br>XIX դարի վերջի պատմագրութ-ը<br>Անգլոսաքսոնական դպրոցը: «Ամերիկյան ժողովրդի պատմությունը»:<br>Բանվորական շարժման պատմությունը:<br>Մարքսիստական պատմագրութ. առաջին քայլերը: | 2 | տե՛ս գրականության ցանկը 1, 3, 4, 5 |
| | | | | |

## 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Ստուգման ձևը | Գրականություն[10] |
|---|---|---|---|---|---|

[10] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հումանիստական պատմական միտքը: | Հումանիստ. աշխարհայացքը: Հումանիստ. պատմագրությունը: Հումանիստ. պատմագրութ.Իտալիայում | 2 | Հարց ու պատասխան, իրավիճակային վերլուծություն, խնդիրի առաջադրում, խմբային քննարկում | *տես գր. ցանկը, 1, 3, 5, 6,* |
| 2. | Սոցիալ-քաղաք. միտքը և պատմությունը XVII դ. անգլիակ. հեղափոխության ժամանակաշրջանումԻշխանության և սեփականության ծագման հիմնախնդիրը: | Դիգգերի սոցիալ-պատմ հայացքները Ջերալդ Ուինսթենլի: Լեվելլերների սոց.-պատմ. հայացքները Ջոն Լիլբերն: Ինդեփենդենտ. քաղաքական-պատմ. հայեցակարգը: Հենրի Այրթոն: Ջոն Միլթոն: Ջ. Սփրիգ: Միապետականների հաս.-քաղաք. հայացքները: Էդուարդ Հայդ /կոմս Կլարենդո/ Թոմաս Հոբս: Ջ. Հարինգտոն: | 2 | Հարց ու պատասխան, իրավիճակային վերլուծություն, խնդիրի առաջադրում, խմբային քննարկում | *տես գր. ցանկը, 1, 3-5, 6,* |
| 3 | Լուսավորության դարը Ֆրանսիայում. լուսավորիչների պատմ. հայացքները: Պատմական մտքի զարգ. ֆրանս. մեծ հեղափոխության ժամանակաշրջանում | Ֆրանսիակ. լուսավորիչներն ու պատմ-ը. Ա.դը Բուլենվիլ Ժ. Բ. Դյուբո: Շ.Լ.Մոնտեսքյո Ֆ.Վոլտեր: Ժ.Թյուրգո Ֆրանսիական փիլիսոփա-մատերիալիստները: Դ. Դիդրո: Հելվեցիուս: Պոլ Հոլբախ: Գիյոմ Ռեյնալ: Ժ.Ժ. Ռուսսո: Գ. Մաբլի: Ժ.Ա.Կոնդորսե: Ա.Բարնավ: Կ.Վոլնեյ: Ֆր. Բաբյոֆ: | 4 | Հարց ու պատասխան իրավիճակային վերլուծություն, խնդիրի առաջադրում, խմբային քննարկում | *տես գր. ցանկը, 1, 2, 3,5,* |
| 4 | Անգլ. լուսավորությունը և պատմական միտքը: Շոտլանդական դպրոցը: | Անգլիական լուսավորության հիմն. գծերը: Դեվիդ Հյում: Էդ. Գիբբոն: Շոտլանդական պատմական-փիլիսոփայական դպրոցը: Ադամ Ֆերգյուսոն: Ջոն Միլլար: Ու.Ռոբերտսոն: Ադամ Սմիթ: | 2 | Հարց ու պատասխան իրավիճակային վերլուծություն, խնդիրի առաջադրում, խմբային քննարկում | *տես գր. ցանկը, 1, 3-5, 6,* |
| 5 | Պատմության փիլիսոփայությունը գերմանական լուսավորությունում: | Պատմ. գիտ. զարգացումը: Իոհան Մոզեր: Պատմ.-փիլիսոփ. միտքը գերման լուսավորությունում: Գոտհոլդ Լեսսինգ: Ի. Կանտ: Գյոթեի պատմ. հայացքները: | 2 | Հարց ու պատասխան իրավիճակային վերլուծություն, խնդիրի առաջադրում, խմբային | *տես գր. ցանկը, 1, 3-5,* |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Ֆ.Շիլլերը որպես պատմաբան: Իոհան Հերդերի պատմ. հայեցակարգը: Յուստուս Մյոզերը և ռոմանտիզմի ծագումը: Գյոթինգենյան դպրոցը: ԻՔ.Գատտերեր, Ա.Լ. Շլյոցեր: Գերմանական յակոբինականությունը: Կ.ֆոն Կնոբլաուխ: Գ. Ֆորստեր: Ա. Այնզիդել: | | քննարկում | |
| 6 | Անկախության համար պատերազմը և հյուսիսամերիկյան լուսավորիչների սոցիալ-պատմական հայեցակետը: | Ամերիկյան պատմագրութ. ակունքները: Ամերիկյան լուսավորության հիմնական գծերը: Բ.Ֆրանկլին: Թ. Ջեֆֆերսոն: Թոմաս Փեյն: Ամերիկյան հեղափոխության չափավոր գործիչների պատմական հայացքները: Ջ. Մեդիսոն: Ալ. Համիլտոն: Ջոն Ադամս: | 2 | իրավիճակային վերլուծություն, խնդիրի առաջադրում, խմբային քննարկում | *գր. 1, 2, 6,* |

### 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Աշխատանքի տեսակը[11] | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն[12] |
|---|---|---|---|---|---|
| 1. | XVII դարի անգլիական հեղափոխության պատմագրությունը | Ռեֆերատ, խմբային աշխատանք, անհատական աշխատանք, զեկույց | 10-րդ և 16-րդ շաբաթներում | Բանավոր և գրավոր | *տես գր. ցանկը, 1, 3, 5, 6,* |

[11] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը
[12] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. | XVIII դարի ամերիկյան հեղափոխության պատմագրությունը | Ռեֆերատ, խմբային աշխատանք, անհատական աշխատանք, զեկույց | 10-րդ և 16-րդ շաբաթներում | Բանավոր և գրավոր | *տես գր. ցանկը, 1, 3-5, 6,* |
| 3. | XVIII դարի ֆրանսիական հեղափոխության պատմագրությունը | Ռեֆերատ, խմբային աշխատանք, անհատական աշխատանք, զեկույց | 10-րդ և 16-րդ շաբաթներում | Բանավոր և գրավոր | *տես գր. ցանկը, 1, 3-5* |
| 4 | 1848թ. ֆրանսիական հեղափոխության պատմագրությունը | Ռեֆերատ, խմբային աշխատանք, անհատական աշխատանք, զեկույց | 10-րդ և 16-րդ շաբաթներում | Բանավոր և գրավոր | *տես գր. ցանկը, 1, 2, 3, 4, 5* |
| 5 | 1848թ. գերմանական հեղափոխության պատմագրությունը | Ռեֆերատ, խմբային աշխատանք, անհատական աշխատանք, զեկույց | 10-րդ և 16-րդ շաբաթներում | Բանավոր և գրավոր | *տես գր. ցանկը, 1, 3-5, 6,* |
| 6 | 1848թ. իտալական հեղափոխական, ազգային-ազատագրական պայքարի պատմագրությունը | Ռեֆերատ, խմբային աշխատանք, անհատական աշխատանք, զեկույց | 10-րդ և 16-րդ շաբաթներում | Բանավոր և գրավոր | *Տես գր. 1, 2, 6* |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7 | 1848թ. հունգարական ազատագրական պայքարի պատմագրությունը | Ռեֆերատ, խմբային աշխատանք, անհատական աշխատանք, զեկույց | 10-րդ և 16-րդ շաբաթներում | Բանավոր և գրավոր | *տես գր. ցանկը, 1, 3, 5, 6,* |
| 8 | 1848թ. ավստրիական հեղափոխության պատմագրությունը | Ռեֆերատ, խմբային աշխատանք, անհատական աշխատանք, զեկույց | 10-րդ և 16-րդ շաբաթներում | Բանավոր և գրավոր | *տես գր. ցանկը, 1, 3, 4, 6,* |
| 9 | XIX դարի լեհական ազատագրական պայքարի պատմագրությունը | Ռեֆերատ, խմբային աշխատանք, անհատական աշխատանք, զեկույց | 10-րդ և 16-րդ շաբաթներում | Բանավոր և գրավոր | *տես գր. ցանկը, 1, 3-5* |
| 10 | 1848թ. չեխական ազգային-ազատագրական պայքարի պատմագրությունը | Ռեֆերատ, խմբային աշխատանք, անհատական աշխատանք, | 10-րդ և 16-րդ շաբաթներում | Բանավոր և գրավոր | *տես գր. ցանկը, 1, 3-5, 6,* |
| 11 | Չարտիստական շարժման պատմագրությունը | Ռեֆերատ, խմբային աշխատանք, անհատական աշխատանք, | 10-րդ և 16-րդ շաբաթներում | Բանավոր և գրավոր | *տես գր. ցանկը, 1, 2, 4-5, 6,* |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12 | ԱՄՆ-ում քաղաքացիական պատերազմի պատմագրությունը | Ռեֆերատ, խմբային աշխատանք, անհատական աշխատանք, | 10-րդ և 16-րդ շաբաթներում | Բանավոր և գրավոր | *Տես. գր. 1, 2, 6,* |
| 13 | Գերմանիայի միավորման պատմագրությունը | Ռեֆերատ, խմբային աշխատանք, անհատական աշխատանք, | 10-րդ և 16-րդ շաբաթներում | Բանավոր և գրավոր | *տես գր. 1, 3, 5, 6* |
| 14 | Իտալիայի միավորման պատմագրությունը | Ռեֆերատ, խմբային աշխատանք, անհատական աշխատանք, | 10-րդ և 16-րդ շաբաթներում | Բանավոր և գրավոր | *տես գր. 1, 3-5* |
| 15 | Փարիզի կոմունայի պատմագրությունը | Ռեֆերատ, խմբային աշխատանք, անհատական աշխատանք, | 10-րդ և 16-րդ շաբաթներում | Բանավոր և գրավոր | *տես գր. 1, 3-5, 6,* |
| | | | | | |

## 13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[13]

| Ռեսուրսի անվանումը | Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում) |
|---|---|
| Լսարան (հատուկ կահավորմամբ) | Լսարան |
| Նյութեր լաբորատոր աշխատանքների համար | |
| Սարքեր, սարքավորումներ | համակարգիչ, պրոյեկտոր, Սմարթ գրատախտակ |

[13] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

| | |
|---|---|
| Համակարգչային ծրագրեր | |
| Այլ | Քարտեզներ, տեղեկատվական նյութեր, պաստառներ |

## 14. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[14]:

### 14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր, նախատեսվում է 4 ստուգում՝ յուրաքանչյուրը 10 միավոր:
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր, կիսամյակի ընթացքում նախատեսվում է 1 ինքնուրույն աշխատանք:
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

### 14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է քննությամբ :

Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակում 2 ընթացիկ քննության միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

[14]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.),

## 14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

1. Հումանիստական աշխարհայացքը: Հումանիստական պատմագրությունը: Հումանիստական պատմագրությունը Իտալիայում:
2. «Քաղաքական-հռետորական դպրոցը»: Լեոնարդո Բրունի:
3. «Խորագիտակ քննադատական դպրոցը»: Ֆլավիո Բիոնդո: Լորենցո Վալլա:
4. Նոր «քաղաքական» դպրոցը: Նիկկոլո Մաքիավելլի: Ֆրանչեսկո Գվիչչարդինի:
5. Հումանիստական պատմագրության խոշորագույն ներկայացուցիչները Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներում: Ժան Բոդեն: Թոմաս Մոր: Ֆրենսիս Բեկոն: Սեբաստիան Ֆրանկ:
6. Անգլիական հասարակական միտքը XVII դարի հեղափոխության տարիներին: Դիգգերի սոցիալ-պատմական հայացքները: Ջերալդ Ուինսթենլի:
7. Լեվելերների սոցիալ-պատմական հայացքները: Ջոն Լիլբերն:
8. Ինդեփենդենտների քաղաքական-պատմական հայեցակարգը: Հենրի Այրթոն: Ջոն Միլթոն: Ջոշուա Սփրիգ:
9. Միապետականների հասարակական-քաղաքական հայացքները: Էդուարդ Հայդ (կոմս Կլարենդո): Թոմաս Հոբս: Ջեյմս Հարինգտոն:
10. Պատմական միտքը Անգլիայում վերահաստատման տարիներին: Էդուարդ Լադլոու: Թոմաս Ֆերֆակս: Ջիլբերթ Բարնետ: Ջոն Լոկ:
11. Ֆրանսիական լուսավորիչներն ու պատմությունը. պատմական հայացքների և ստեղծագործությունների բնութագրական գծերը:
12. Ռոմանագերմանական հիմնախնդրի ձևավորումը ֆրանսիական պատմագրությունում: Անրի դը Բուլենվիլ: Ժան Բատիստ Դյուբո:
13. Ռոմանագերմանական հիմնախնդրի ձևավորումը ֆրանսիական պատմագրությունում: Շառլ Լուի Մոնտեսքյո: Ֆրանսուա Վոլտեր: Ժակ Թյուրգո:
14. Ֆրանսիական փիլիսոփա-մատերիալիստները: Դենի Դիդրո: Կլոդ Հելվեցիուս: Պոլ Հոլբախ:
15. Ֆրանսիական փիլիսոփա-մատերիալիստները: Գիյոմ Ռեյնալ: Ժան Ժակ Ռուսսո: Գաբրիել Մաբլի:
16. Պատմական մտքի զարգացումը XVIII դարի ֆրանսիական հեղափոխության տարիներին: Ժան Անտուան Կոնդորսե: Անտուան Բարնավ: Կոնստանտեն Վոլնեյ:
17. Ֆրանսուա Բաբյոֆը և բաբյոֆականները:
18. Անգլիական լուսավորության հիմնական գծերը: Դեվիդ Հյում: Էդուարդ Գիբբոն:
19. Շոտլանդական պատմական-փիլիսոփայական դպրոցը: Ադամ Ֆերգյուսոն: Ջոն Միլլար: Ուիլյամ Ռոբերտսոն: Ադամ Սմիթ:
20. Պատմական գիտության զարգացումը Գերմանիայում: Իոհան Մոզեր:
21. Պատմական - փիլիսոփայական միտքը գերմանական լուսավորությունում: Գոտհոլդ Լեսսինգ: Իմմանուիլ Կանտ:
22. Գյոթեի պատմական հայացքները: Ֆ.Շիլլերը որպես պատմաբան: Իոհան Հերդերի պատմական հայեցակարգը:

23. Յուստուս Մյոզերը և ռոմանտիզմի ծագումը:
24. Գյոթինգենյան դպրոցը: Իոհան Քրիստոֆ Գատտերեր: Ավգուստ Լյուդվիգ Շլյոցեր:
25. Գերմանական յակոբինականությունը: Կարլ ֆոն Կնոբլաուխ: Գեորգ Ֆորստեր: Ավգուստ Այնզիդել
26. Ամերիկյան պատմագրության ակունքները: Ամերիկյան լուսավորության հիմնական գծերը: Բենջամին Ֆրանկլին: Թոմաս Ջեֆֆերսոն: Թոմաս Փեյն:
27. Ամերիկյան հեղափոխության չափավոր գործիչների պատմական հայացքները: Ջեյմս Մեդիսոն: Ալեքսանդր Համիլտոն: Ջոն Ադամս:
28. Պատմական գիտության դերը Ֆրանսիայում վերահաստատման ժամանակաշրջանում: Ռոմանտիկական պատմագրության ծագումը: XVIIIդ. Ֆրանսիական հեղափոխության պահպանողականների գնահատականը: Ժոզեֆ դը Մեստր:
29. Պատմական գիտության դերը Ֆրանսիայում վերահաստատման ժամանակաշրջանում: Ֆրանսիական հեղափոխության պահպանողականների գնահատականը: Լուի դը Բոնալդ: Ֆրանսուա Ռենե դը Շատոբրիան: Ֆրանսուա Մոնլոզյե:
30. Վերահաստատման տարիների պատմաբանների լիբերալ դպրոցը Ֆրանսիայում: Օգյուստեն Թյերրի: Ֆրանսուա Գիզո: Ֆրանսուա Մինյե: Ադոլֆ Թյեր: Ժերմեն դե Ստալ:
31. Ֆրանսիական ուտոպիական-քննադատական սոցիալիզմի պատմական գաղափարները: Անրի դե Սեն-Սիմոն:
32. 1830-1840-ական թթ. ֆրանսիական պատմագրությունը: Ալեքսիս դե Տոկվիլ: Ալֆոնս Լամարթին:
33. Ֆրանսիական ռոմանտիկական պատմագրության դեմոկրատական ուղղությունը: Ժյուլ Միշլե:
34. Յակոբինական ավանդույթների ծագումը ֆրանսիական հեղափոխության պատմագրությունում: Ռոբերտ Լեվասսար: Ֆիլիպ Բյուշե: Լուի Բլան:
35. 1830-1840-ական թթ. ֆրանսիական կոմունիստների պատմական հայացքները: Ֆիլիպո Բուոնարոտտի: Էտյեն Կաբե: Թեոդոր Դեզամի:
36. Պատմական գիտության վիճակը Գերմանիայում XIX դարում: Պատմական ընկերությունների գործունեությունը: Իոհան Ֆիխտեի, Ֆրիդրիխ Շելլինգի, Գեորգ Հեգելի պատմական հայացքները
37. Գերմանական ռոմանտիզմը: Ֆրանց Բաադեր:
38. Իրավունքի պատմական դպրոցը Գերմանիայում: Ֆրիդրիխ Սավինյի: Կարլ Ֆրիդրիխ Այխգորն: Լեոպոլդ Ռանկեի, Բարտոլդ Նիբուրի պատմական հայացակարգերը:
39. Գերմանական լիբերալ-ռոմանտիկական պատմագրությունը: Հենրիխ Լուդեն: Կարլ ֆոն Ռոտտեկ: Ֆրիդրիխ Դալլման:
40. Հայդելբերգի լիբերալ-լուսավորական դպրոցը: Ֆրիդրիխ Շլոսեր: Գեորգ Գերվինուս: Վիլհելմ Յիմմերման:
41. Անգլիական հասարակական միտքը: Էդմունդ Բյորկ: Թոմաս Մալթուս: Ուիլյամ Գոդվին: Հերեմի Բենտամ: Դավիդ Ռիկարդո:
42. Պատմական գիտության վիճակը Անգլիայում XIX դարում: Ֆրենսիս Պալգրեվ: Վալտեր Սկոտ: Թոմաս Թուկ: Հենրի Քոլբրուք:
43. Տորիների պատմագրությունը: Արչիբալդ Ալիսոն: Ջոն Ռասսել: Ջորջ Գրոտ:
44. Վիգերի պատմագրությունը: Հենրի Հալլամ: Թոմաս Մաքոլեյ:
45. Անգլիական մանրբուրժուական արմատական պատմագրությունը: Ուիլյամ Քոբբեթ: Թոմաս Կարլեյլ: Ռոբերտ Օուեն:
46. Չարտիստ պատմաբանները: Ջեյմս Օ’Բրայեն:
47. Անկախության համար պատերազմի ամերիկյան պատմագրությունը: Ջ.Ռամսեյ: Ու.Գորդոն: Թ.Հաթչինսոն: Փ.Օլիվեր: Ջ.Մինս: Մ.Ուորեն: Մ.Ուիմս:

48. Ամերիկյան «Վաղ դպրոցի» պատմաբանները: Ջորջ Բենկրոֆտ: Ֆրենսիս Փարքմեն: Ջոն Մոթլի: Ուիլյամ Փրեսքոթ:

**Ա) 1-ին ընթացիկ քննություն (կիսամյակի 9-10 շաբաթվա ընթացքում)**

- **Ընդգրկված հարցեր.**

1. Հումանիստական աշխարհայացքը: Հումանիստական պատմագրությունը: Հումանիստական պատմագրությունը Իտալիայում:
2. «Քաղաքական-հռետորական դպրոցը»: Լեոնարդո Բրունի:
3. «Խորազնտակ քննադատական դպրոցը»: Ֆլավիո Բիոնդո: Լորենցո Վալլա:
4. Նոր «քաղաքական» դպրոցը: Նիկկոլո Մաքիավելլի: Ֆրանչեսկո Գվիչչարդինի:
5. Հումանիստական պատմագրության խոշորագույն ներկայացուցիչները Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներում: Ժան Բոդեն: Թոմաս Մոր: Ֆրենսիս Բեկոն: Սեբաստիան Ֆրանկ:
6. Անգլիական հասարակական միտքը XVII դարի հեղափոխության տարիներին: Դիգգերի սոցիալ-պատմական հայացքները: Ջերալդ Ուինսթենլի:
7. Լեվելերների սոցիալ-պատմական հայացքները: Ջոն Լիլբերն:
8. Ինդեփենդենտների քաղաքական-պատմական հայեցակարգը: Հենրի Այրթոն: Ջոն Միլթոն: Ջոշուա Սփրիգ:
9. Միապետականների հասարակական-քաղաքական հայացքները: Էդուարդ Հայդ (կոմս Կլարենդո): Թոմաս Հոբս: Ջեյմս Հարինգտոն:
10. Պատմական միտքը Անգլիայում վերահաստատման տարիներին: Էդուարդ Լադլոու: Թոմաս Ֆերֆակս: Ջիլբերթ Բարնետ: Ջոն Լոկ:
11. Ֆրանսիական լուսավորիչներն ու պատմությունը. պատմական հայացքների և ստեղծագործությունների բնութագրական գծերը:
12. Ռոմանագերմանական հիմնախնդրի ձևավորումը ֆրանսիական պատմագրությունում: Անրի դը Բուլենվիլ: Ժան Բատիստ Դյուբո:
13. Ռոմանագերմանական հիմնախնդրի ձևավորումը ֆրանսիական պատմագրությունում: Շառլ Լուի Մոնտեսքյո: Ֆրանսուա Վոլտեր: Ժակ Թյուրգո:
14. Ֆրանսիական փիլիսոփա-մատերիալիստները: Դենի Դիդրո: Կլոդ Հելվեցիուս: Պոլ Հոլբախ:
15. Ֆրանսիական փիլիսոփա-մատերիալիստները: Գիյոմ Ռեյնալ: Ժան Ժակ Ռուսսո: Գաբրիել Մաբլի:
16. Պատմական մտքի զարգացումը XVIII դարի ֆրանսիական հեղափոխության տարիներին: Ժան Անտուան Կոնդորսե: Անտուան Բարնավ: Կոնստանտեն Վոլնեյ:
17. Ֆրանսուա Բաբյոֆը և բաբյոֆականները:
18. Անգլիական լուսավորության հիմնական գծերը: Դեվիդ Հյում: Էդուարդ Գիբբոն:
19. Շոտլանդական պատմական-փիլիսոփայական դպրոցը: Ադամ Ֆերգյուսոն: Ջոն Միլլար: Ուիլյամ Ռոբերտսոն: Ադամ Սմիթ:
20. Պատմական գիտության զարգացումը Գերմանիայում: Իոհան Մոզեր:
21. Պատմական - փիլիսոփայական միտքը գերմանական լուսավորությունում:

Գոտհոլդ Լեսսինգ: Իմմանուիլ Կանտ:

22. Գյոթեի պատմական հայացքները: Ֆ.Շիլլերը որպես պատմաբան: Իոհան Հերդերի պատմական հայեցակարգը:

23. Յուստուս Մյոզերը և ռոմանտիզմի ծագումը:
24. Գյոթինգենյան դպրոցը: Իոհան Քրիստոֆ Գատտերեր: Ավգուստ Լյուդվիգ Շլյոցեր:
25. Գերմանական յակոբինականությունը: Կարլ ֆոն Կնոբլաուխ: Գեորգ Ֆորստեր: Ավգուստ Այնզիդել

Բ) 2-րդ ընթացիկ քննություն (կիսամյակի 19-20 շաբաթվա ընթացքում)

▪ **Ընդգրկված հարցեր.**

1. Ամերիկյան պատմագրության ակունքները: Ամերիկյան լուսավորության հիմնական գծերը: Բենջամին Ֆրանկլին: Թոմաս Ջեֆֆերսոն: Թոմաս Փեյն:

2. Ամերիկյան հեղափոխության չափավոր գործիչների պատմական հայացքները: Ջեյմս Մեդիսոն: Ալեքսանդր Համիլտոն: Ջոն Ադամս:

3. Պատմական գիտության դերը Ֆրանսիայում վերահաստատման ժամանակաշրջանում: Ռոմանտիկական պատմագրության ծագումը: XVIIIդ. Ֆրանսիական հեղափոխության պահպանողականների գնահատականը: Ժոզեֆ դը Մեստր:

4. Պատմական գիտության դերը Ֆրանսիայում վերահաստատման ժամանակաշրջանում: Ֆրանսիական հեղափոխության պահպանողականների գնահատականը: Լուի դը Բոնալդ: Ֆրանսուա Ռենե դը Շատոբրիան: Ֆրանսուա Մոնլոզյե:
5. Վերահաստատման տարիների պատմաբանների լիբերալ դպրոցը Ֆրանսիայում: Օգյուստեն Թյերրի: Ֆրանսուա Գիզո: Ֆրանսուա Մինյե: Ադոլֆ Թյեր: Ժերմեն դե Ստալ:

6. Ֆրանսիական ուտոպիական-քննադատական սոցիալիզմի պատմական գաղափարները: Անրի դե Սեն-Սիմոն:
7. 1830-1840-ական թթ. ֆրանսիական պատմագրությունը: Ալեքսիս դե Տոկվիլ: Ալֆոնս Լամարթին:
8. Ֆրանսիական ռոմանտիկական պատմագրության դեմոկրատական ուղղությունը: Ժյուլ Միշլե:
9. Յակոբինական ավանդույթների ծագումը ֆրանսիական հեղափոխության պատմագրությունում: Ռոբերտ Լեվասսար: Ֆիլիպ Բյուշե: Լուի Բլան:
10. 1830-1840-ական թթ. ֆրանսիական կոմունիստների պատմական հայացքները: Ֆիլիպո Բուոնարոտտի: Էտյեն Կաբե: Թեոդոր Դեզամի:
11. Պատմական գիտության վիճակը Գերմանիայում XIX դարում: Պատմական ընկերությունների գործունեությունը: Իոհան Ֆիխտեի, Ֆրիդրիխ Շելլինգի, Գեորգ Հեգելի պատմական հայացքները
12. Գերմանական ռոմանտիզմը: Ֆրանց Բաադեր:
13. Իրավունքի պատմական դպրոցը Գերմանիայում: Ֆրիդրիխ Սավինյի: Կարլ Ֆրիդրիխ Այխգորն: Լեոպոլդ Ռանկեի, Բարտոլդ Նիբուրի պատմական հայացակարգերը:
14. Գերմանական լիբերալ-ռոմանտիկական պատմագրությունը: Հենրիխ Լուդեն: Կարլ ֆոն Ռոտտեկ: Ֆրիդրիխ Դալլման:
15. Հայդելբերգի լիբերալ-լուսավորական դպրոցը: Ֆրիդրիխ Շլոսեր: Գեորգ Գերվինուս: Վիլհելմ Ցիմմերման:

16. Անգլիական հասարակական միտքը: Էդմունդ Բյորկ: Թոմաս Մալթուս: Ուիլյամ Գոդվին: Ջերեմի Բենտամ: Դավիդ Ռիկարդո:
17. Պատմական գիտության վիճակը Անգլիայում XIX դարում: Ֆրենսիս Պալգրեվ: Վալտեր Սկոտ: Թոմաս Թուկ: Հենրի Քոլբրուք:
18. Տորիների պատմագրությունը: Արչիբալդ Ալիսոն: Ջոն Ռասսել: Ջորջ Գրոտ:
19. Վիգերի պատմագրությունը: Հենրի Հալլամ: Թոմաս Մաքոլեյ:
20. Անգլիական մանրբուրժուական արմատական պատմագրությունը: Ուիլյամ Քոբբեթ: Թոմաս Կարլեյլ: Ռոբերտ Օուեն:
21. Չարտիստ պատմաբանները: Ջեյմս Օ’Բրայեն:
22. Անկախության համար պատերազմի ամերիկյան պատմագրությունը: Ջ.Ռամսեյ: Ու.Գորդոն: Թ.Հաթչինսոն: Փ.Օլիվեր: Ջ.Մինս: Մ.Ուորեն: Մ.Ուիմս:
23. Ամերիկյան «Վաղ դպրոցի» պատմաբանները: Ջորջ Բենկրոֆտ: Ֆրենսիս Փարքմեն: Ջոն Մոթլի: Ուիլյամ Փրեսքոթ:

## 1.1. Գնահատման չափանիշները[15].

1. Սեմինար պարապմունքներ՝ առավելագույնը գումարային 40 միավոր:
2. Ընթացիկ ստուգումներ- առավելագույնը գումարային 40 միավոր
3. Ինքնուրույն աշխատանքը՝ առավելագույնը 20 միավոր:

[15] Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝ __022201.00.6 – Պատմություն______________

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ _ 022201.01.6 – Պատմություն ______________

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ _________բակալավր_______________________

/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2023

Առկա ուսուցման համակարգ

<table>
<tr><td>Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4">Պ/բ-026 -Նոր պատմության պատմագրություն</td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">4 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">4-րդ տարի, 7-րդ կիսամյակ</td></tr>
<tr><td rowspan="6">Ժամերի բաշխումը</td><td rowspan="4">Լսարանային</td><td rowspan="4">56</td><td>Դասախոսություն</td><td>42</td></tr>
<tr><td>Սեմինար</td><td>14</td></tr>
<tr><td>Լաբորատոր  աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Ինքնուրույն</td><td colspan="3">64</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td colspan="3">120</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">Քննություն</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը</td><td colspan="4">Պատմագրության տիրապետումը հնարավորություն է տալիս ուսանողներին առավել ամբողջական ընկալել պատմական գործընթացները և խորապես ուսումնասիրել պատմական գիտության պատմությունը: «Նոր պատմության պատմագրությունե առարկայի դասավանդումը նպատակ է հետապնդում ուսանողությանը ներկայացնել պատմական մտքի զարգացումը Եվրոպայի և Ամերիկայի երկրներում XV-XIX դարերում:</td></tr>
<tr><td>Դասընթացի վերջնարդյունքները</td><td colspan="4">Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.<br>Գիտելիք<br>Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է իմանա.<br>● պատմական մտքի զարգացումը Եվրոպայի և Ամերիկայի երկրներում XV-XIX դարերում:<br>● Վերածննդի դարաշրջանի (XV-XVIդդ) արևմտաեվրոպական հումանիստական պատմագրությունը<br>● XVIIIդ. ֆրանսիական լուսավորիչների հայացքները<br>● Անգլիական և շոտլանդական լուսավորիչների հայացքները<br>● Գերմանիայում իրավունքի պատմական դպրոցի ներկայացուցիչների պատմագիտական հայացքները<br>● Ֆրանսիայում վերահաստատման դարաշրջանի լիբերալ պատմական դպրոցի ներկայացուցիչների հայացքները<br>● Անգլիական լիբերալ և պահպանողական պատմագրության ներկայացուցիչների հայացքները<br>● Ամերիկյան լուսավորիչների գաղափարները</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | *Հմտություն*<br>● սկզբնաղբյուրների հետ աշխատելու հմտություններ<br>● պատմության վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքների համակարգման և տեսական վերլուծության *հմտություն*<br>*Կարողունակություն*<br>● պատմական փաստերը համադրելու և երևույթները համակողմանի գնահատելու կարողություն<br>● պատմական կոնկրետ փաստերն ու երևույթները ընդհանուր տեսությունների, գաղափարների տեսանկյունից բացահայտելու կարողություն |
| **Դասընթացի բովանդակությունը** | Թեմա 1. Հումանիստական պատմական միտքը:<br>Թեմա 2. Սոցիալ-քաղաքական միտքը և պատմությունը XVII դարի անգլիական հեղափոխության ժամանակաշրջանում: Իշխանության և սեփականության ծագման հիմնախնդիրը:<br>Թեմա 3. Լուսավորության դարը Ֆրանսիայում. լուսավորիչների պատմական հայացքները: Պատմական մտքի զարգացումը Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակաշրջանում:<br>Թեմա 4. Անգլիական լուսավորությունը և պատմական միտքը: Շոտլանդական դպրոցը:<br>Թեմա 5. Պատմության փիլիսոփայությունը գերմանական լուսավորությունում:<br>Թեմա 6. Անկախության համար պատերազմը և հյուսիսամերիկյան լուսավորիչների սոցիալ-պատմական հայեցակետը<br>Թեմա 7. Ֆրանսիական պատմագրությունը: Վերահաստատման ժամանակաշրջանի պատմաբանների դպրոցը: 1789թ. Ֆրանսիական մեծ հեղափոխության հիմնախնդիրները*:*<br>Թեմա 8. Գերմանական պատմագրությունը. լուսավորությունից դեպի ռոմանտիզմ:<br>Թեմա 9. Տորիների և վիգերի պատմագրությունը Անգլիայում:<br>Թեմա 10. Պատմական գիտության կայացումը ԱՄՆ-ում: «Վաղ դպրոցը»:<br>Թեմա 11. Անգլիական պոզիտիվիզմը: Պատմագրության հիմնական ուղղությունները:<br>Թեմա 12. Պատմական գիտությունը Ֆրանսիայում: Պոզիտիվիստական պատմագրությունը:<br>Թեմա 13. Գերմանական պատմագրությունը: Փոքրգերմանական պատմական դպրոցը:<br>Թեմա 14. ԱՄՆ պատմագրությունը Քաղաքացիական պատերազմի և վերակառուցման ժամանակաշրջանում: Պոզիտիվիզմի հաստատումը XIX դարի վերջին: |
| **Գնահատման մեթոդները և չափանիշները** | Գնահատումն իրականացվում է բազմագործոնային համակարգով՝ 100 բալանոց սանդղակով, հետևյալ բաղադրիչների ներառմամբ.<br>✓ ինքնուրույն աշխատանքի կատարում,<br>✓ սեմինար պարապմունքներին ուսանողի |

| | |
|---|---|
| | մասնակցություն,<br>✓ ընթացիկ ստուգում: |
| **Գրականություն** | *Պարտադիր*<br>1. Историография истории нового и новейшего времени стран Европы и Америки. Под ред. С.И. Дементьева, М., 1990<br>2. Историография новой и новейшей истории стран Европы и Америки. Под ред. И.С. Галкина, М., 1968<br>3. Историография новой и новейшей истории стран Европы и Америки. Под ред. А.В. Адо, И.С.Галкина и др..<br>4. Историография истории нового времени. Под ред. В.И.Овсянникова и В.Г.Сироткина<br>5. Историография новой и новейшей истории стрՈн Европы и Америки. Под ред. И.С.Галкина, И.П.Дементьева и др.<br>*Լրացուցիչ*<br>1. Историография средних веков, под. ред. Ерусалимского<br>2. Историография южных и западных славян, М., 1987<br>3. Историография истории средных веков . Под ред. И.С. Галкина, М., 1965<br>4. Гутнова Е.В. Историография истории средных веков, М., 1985 |

**Հեռակա ուսուցման համակարգ**

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Դասընթացի թվանիշը, անվանումը** | **Պ/բ-026 -Նոր պատմության պատմագրություն** | | | |
| **Դասընթացին հատկացվող կրեդիտը** | 4 կրեդիտ | | | |
| **Ուսումնառության տարի / կիսամյակ** | 5-րդ տարի, 10-րդ կիսամյակ | | | |
| **Ժամերի բաշխումը** | Լսարանային | 12 | Դասախոսություն | 8 |
| | | | Սեմինար | 4 |
| | | | Լաբորատոր աշխատանք | |
| | | | Գործնական աշխատանք | |
| | Ինքնուրույն | 108 | | |
| | Ընդամենը | 120 | | |
| **Ստուգման ձևը** | Քննություն | | | |
| **Դասընթացի նպատակը** | Պատմագրության տիրապետումը հնարավորություն է տալիս ուսանողներին առավել ամբողջական ընկալել պատմական գործընթացները և խորապես ուսումնասիրել պատմական գիտության պատմությունը: «Նոր պատմության պատմագրություն» առարկայի դասավանդումը նպատակ է հետապնդում ուսանողությանը ներկայացնել պատմական մտքի զարգացումը Եվրոպայի և Ամերիկայի երկրներում XV-XIX դարերում: | | | |

| | |
|---|---|
| **Դասընթացի վերջնարդյունքները** | Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.<br>*Գիտելիք*<br>Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է իմանա.<br>● պատմական մտքի զարգացումը Եվրոպայի և Ամերիկայի երկրներում XV-XIX դարերում:<br>● Վերածննդի դարաշրջանի (XV-XVIդդ) արևմտաեվրոպական հումանիստական պատմագրությունը<br>● XVIIIդ. ֆրանսիական լուսավորիչների հայացքները<br>● Անգլիական և շոտլանդական լուսավորիչների հայացքները<br>● Գերմանիայում իրավունքի պատմական դպրոցի ներկայացուցիչների պատմագիտական հայացքները<br>● Ֆրանսիայում վերահաստատման դարաշրջանի լիբերալ պատմական դպրոցի ներկայացուցիչների հայացքները<br>● Անգլիական լիբերալ և պահպանողական պատմագրության ներկայացուցիչների հայացքները<br>● Ամերիկյան լուսավորիչների գաղափարները<br><br>*Հմտություն*<br>● սկզբնաղբյուրների հետ աշխատելու հմտություններ<br>● պատմության վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքների համակարգման և տեսական վերլուծության *հմտություն*<br>*Կարողունակություն*<br>● պատմական փաստերը համադրելու և երևույթները համակողմանի գնահատելու կարողություն<br>● պատմական կոնկրետ փաստերն ու երևույթները ընդհանուր տեսությունների, գաղափարների տեսանկյունից բացահայտելու կարողություն |
| **Դասընթացի բովանդակությունը** | Թեմա 1. Հումանիստական պատմական միտքը:<br>Թեմա 2. Սոցիալ-քաղաքական միտքը և պատմությունը XVII դարի անգլիական հեղափոխության ժամանակաշրջանում: Իշխանության և սեփականության ծագման հիմնախնդիրը:<br>Թեմա 3. Լուսավորության դարը Ֆրանսիայում. լուսավորիչների պատմական հայացքները: Պատմական մտքի զարգացումը Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակաշրջանում:<br>Թեմա 4. Անգլիական լուսավորությունը և պատմական միտքը: Շոտլանդական դպրոցը:<br>Թեմա 5. Պատմության փիլիսոփայությունը գերմանական լուսավորությունում:<br>Թեմա 6. Անկախության համար պատերազմը և հյուսիսամերիկյան լուսավորիչների սոցիալ-պատմական հայեցակետը<br>Թեմա 7. Ֆրանսիական պատմագրությունը: Վերահաստատման ժամանակաշրջանի պատմաբանների |

| | |
|---|---|
| | դպրոցը: 1789թ. Ֆրանսիական մեծ հեղափոխության հիմնախնդիրները: <br>Թեմա 8. Գերմանական պատմագրությունը. լուսավորությունից դեպի ռոմանտիզմ: <br>Թեմա 9. Տորիների և վիգերի պատմագրությունը Անգլիայում: <br>Թեմա 10. Պատմական գիտության կայացումը ԱՄՆ-ում: «Վաղ դպրոցը»: <br>Թեմա 11. Անգլիական պոզիտիվիզմը: Պատմագրության հիմնական ուղղությունները: <br>Թեմա 12. Պատմական գիտությունը Ֆրանսիայում: Պոզիտիվիստական պատմագրությունը: <br>Թեմա 13. Գերմանական պատմագրությունը: Փոքրգերմանական պատմական դպրոցը: <br>Թեմա 14. ԱՄՆ պատմագրությունը Քաղաքացիական պատերազմի և վերակառուցման ժամանակաշրջանում: Պոզիտիվիզմի հաստատումը XIX դարի վերջին: |
| **Գնահատման մեթոդները և չափանիշները** | Գնահատումն իրականացվում է բազմագործոնային համակարգով՝ 100 բալանոց սանդղակով, հետևյալ բաղադրիչների ներառմամբ. <br>✓ ինքնուրույն աշխատանքի կատարում, <br>✓ սեմինար պարապմունքներին ուսանողի մասնակցություն, <br>✓ ընթացիկ ստուգում: |
| **Գրականություն** | *Պարտադիր* <br>1. Историография истории нового и новейшего времени стран Европы и Америки. Под ред. С.И. Дементьева, М., 1990 <br>2. Историография новой и новейшей истории стран Европы и Америки. Под ред. И.С. Галкина, М., 1968 <br>3. Историография новой и новейшей истории стран Европы и Америки. Под ред. А.В. Адо, И.С.Галкина и др.. <br>4. Историография истории нового времени. Под ред. В.И.Овсянникова и В.Г.Сироткина <br>5. Историография новой и новейшей истории стрՈн Европы и Америки. Под ред. И.С.Галкина, И.П.Дементьева и др <br><br>*Լրացուցիչ* <br>1. Историография средних веков, под. ред. Ерусалимского <br>2. Историография южных и западных славян, М., 1987 <br>3. Историография истории средных веков . Под ред. И.С. Галкина, М., 1965 <br>4. Гутнова Е.В. Историография истории средных веков, М., 1985 |